



Ալեքսանդր Ճատուրյան

Շատերից մեկը

Ես տեսա նորան - այն մատաղ կուսին
Հարսնական շորով տաճարում կանգնած.
Տանջանքի հետքեր գունատ երեսին,
Տխուր հայացքը գետին խոնարհած:

Անգոր, անբարբառ, որպես մի գառնիկ,
Սպանդանոց բերված բռնակալ ձեռքով.
Կույսը զսպում էր սրբաբնի փոթորիկ,
Կույսը լալիս էր սրտի արցունքով...

Եվ նորա կողքին ինքնագոհ, հրպարտ
Կանգնած էր փեսան Կրեստսի փառքով.
Ջոհր - կենսավատ, որպես գարնան վարդ,
Դահիճն - ուժասպառ, խորշոմած դեմքով...

Եվ խոտ բազմություն, ծընող, ազգական,
Դպիր, քահանա խաչ ու մոմ ձեռին՝
Լուռ վրկա էին գոհաբերության
Այդ սրբագործված գազիր պատկերին...

Օ՛, խղճո՛ւկ հայ կին, անարգվա՛ծ էակ,
Հա՛մր ստրկություն ահա քո անուն.
Անգարո՛ւն քո կյանք, անլո՛ւյս քո վիճակ,

Արդյոք ե՞րբ պետք է բացվի քո լեզուն...